ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«25» հուլիսի 2025թ. № 693

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԲԱԶԿԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ՎԱՐԺԱՁԵՎՈՒՄ ՊԱՏՎԱՎՈՐ ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՐԶԻԿ ԱՐԹՈՒՐ ԳԱՐՈՒՇԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 47-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի N 89-Ա որոշմամբ և հաշվի առնելով, որ մարզիկ Արթուր Գարուշի Մելքոնյանը Հայաստանի պարաբազկամարտի առաջնությունում կանգնած դասակարգում վարժաձևերում զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը, հիմք ընդունելով մարզիկի դիմումը, Հայաստանի Հանրապետության հաշմանդամների ֆեդերացիայի կողմից տրված տեղեկանքը և դիպլոմը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2025 թվականի բյուջեի՝

1) «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4727 հոդվածից հատկացնել 35 000 ՀՀ դրամ:

2) «Հանգստի և սպորտի ծառայություններ» գործառական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» տնտեսագիտական դասակարգման 4269 հոդվածից շնորհակալագիր ձեռք բերելու համար հատկացնել 300 ՀՀ դրամ:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2025թ. հուլիսի 25
ք.Սպիտակ